Հավելված N 2
ՀՀ կառավարության 2021 թվականի
հունիսի 17-ի N 981 - Ն որոշման

«Հավելված N 2
ՀՀ կառավարության 2019 թվականի
դեկտեմբերի 19-ի N 1845-Ն որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ

ՍՏՈՒԳԱԹԵՐԹ N _____

ՇԱՀՈՒՄՈՎ ԽԱՂԵՐԻ ☐
ԽԱՂԱՏՆԵՐԻ ☐

ԼԻՑԵՆԶԱՎՈՐՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ՈՒ ՊԱՀԱՆՋՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ

Ստուգման սկիզբը	**Ստուգման ավարտը**
20 թ. _____	20 թ. _____
(տարեթիվը, ամիսը, ամսաթիվը)	*(տարեթիվը, ամիսը, ամսաթիվը)*

Ստուգման հիմքն է_____
_____
Ստուգման ենթակա հարցերի շրջանակը՝ համաձայն ձև ՇԽ-ի _____
_____
Տնտեսական գործունեության տեսակի դասակարգչի ծածկագիրը _____
Կազմակերպչի՝
անվանումը _____
գտնվելու վայրը _____
լիցենզիան տալու ամսաթիվը _____
լիցենզիայի համարը _____
այլ կոնտակտային տվյալներ _____
(հեռախոս, էլ-փոստ)

ՀՎՀՀ ☐☐☐☐☐☐☐☐

Ստուգումն իրականացնող պաշտոնատար անձինք՝

_____ ☐☐☐☐☐☐
(պաշտոնը) *(ծառայողական վկայականի համարը)*

_____ _____*(ստորագրությունը)*
(ազգանունը, անունը, հայրանունը)

_____ ☐☐☐☐☐☐
(պաշտոնը) *(ծառայողական վկայականի համարը)*

_____ _____*(ստորագրությունը)*
(ազգանունը, անունը, հայրանունը)

Կազմակերպչի ղեկավար
կամ լիազորված անձ _____ _____
(ազգանունը, անունը, հայրանունը) *(ստորագրությունը)*

Ձև ՇԽ

Հ Ա Ր Ց Ա Շ Ա Ր

ՇԱՀՈՒՄՈՎ ԽԱՂԵՐԻ ԵՎ ԽԱՂԱՏՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ՈՒ ՊԱՀԱՆՋՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՍՏՈՒԳՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

NN ը/կ	Հարցը	Այո	Ոչ	Չ/Պ	Կշիռ	Ստուգման մեթոդ	Մեկնաբանու-թյուններ	Հարցի համար հիմք հանդիսացող իրավական նորմը
1	2	3	4	5	6	7	8	9
1.	Արդյո՞ք շահումով խաղի կազմակերպիչն իր անվանման կամ ցուցանակների մեջ չի օգտագործում «Խաղատուն» բառը, դրա ածանցյալները կամ թարգմանությունները:				2	Տեսողական		«Շահումով խաղերի, ինտերնետ շահումով խաղերի և խաղատների մասին» օրենքի 3-րդ հոդվածի 3-րդ մաս
2.	Արդյո՞ք խաղային ավտոմատի շահագործումից ստացված հասույթի մեջ շահումների ծրագրավորված ընդհանուր մեծության նվազագույն չափը կազմում է 90:				3	Տեսողական		«Շահումով խաղերի, ինտերնետ շահումով խաղերի և խաղատների մասին» օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մաս
3.	Արդյո՞ք կազմակերպիչը գործունեությունն իրականացնում է լիցենզիայում նշված վայրում (հասցեում):				3	Տեսողական, Փաստաթղթային		«Շահումով խաղերի, ինտերնետ շահումով խաղերի և խաղատների մասին» օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի «ա» կետ
4.	Արդյո՞ք կազմակերպիչն ապահովել է խաղասրահի տարածքի դրսից դեպի ներս անտեսանելիությունը:				2	Տեսողական		«Շահումով խաղերի, ինտերնետ շահումով խաղերի և խաղատների մասին» օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի «բ» կետ
5.	Արդյո՞ք կազմակերպիչն ապահովել է նախասրահի առկայություն, որտեղից բացվում է մուտք դեպի խաղասրահ կամ խաղասրահներ:				2	Տեսողական		«Շահումով խաղերի, ինտերնետ շահումով խաղերի և խաղատների մասին» օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի «բ1» կետ
6.	Արդյո՞ք կազմակերպիչը նախասրահում իրականացնում է մեկ միլիոն ՀՀ դրամից ավելի գործարքներ իրականացնող				2	Տեսողական		«Շահումով խաղերի, ինտերնետ շահումով խաղերի և խաղատների

	հաճախորդների նույնականացման, տվյալների շտեմարանի ստեղծման և պահպանման աշխատանքները:							մասին» օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի «բ2» կետ
7.	Արդյո՞ք խաղասրահում բացակայել են մինչև քսանմեկ տարեկան ֆիզիկական անձինք:				3	Տեսողական, Փաստաթղթային		«Շահումով խաղերի, ինտերնետ շահումով խաղերի և խաղատների մասին» օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի «դ» կետ
8.	Արդյո՞ք կազմակերպիչը խաղացողի առաջին իսկ պահանջի դեպքում տրամադրում է շահումը:				2	Տեսողական, Փաստաթղթային		«Շահումով խաղերի, ինտերնետ շահումով խաղերի և խաղատների մասին» օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի «զ» կետ
9.	Արդյո՞ք կազմակերպիչը խաղասրահում իրականացնում է խաղանիշների (ժետոններ) փոխանակումը միայն կանխիկ դրամով, բանկային քարտով կամ բանկային պրակտիկայում ընդունված այլ վճարային փաստաթղթերով:				2	Տեսողական		«Շահումով խաղերի, ինտերնետ շահումով խաղերի և խաղատների մասին» օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի «է» կետ
10.	Արդյո՞ք կազմակերպիչը խաղասրահում կազմակերպվող շահումով խաղերի կանոնները փակցրել է խաղասրահի տեսանելի տեղում:				2	Տեսողական		«Շահումով խաղերի, ինտերնետ շահումով խաղերի և խաղատների մասին» օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի «թ» կետ
11.	Արդյո՞ք կազմակերպիչը շահումով խաղերը կազմակերպում և անցկացնում է իր կողմից սահմանված և լիազոր մարմնի հետ համաձայնեցված կանոնակարգին համապատասխան:				2	Տեսողական, Փաստաթղթային		«Շահումով խաղերի, ինտերնետ շահումով խաղերի և խաղատների մասին» օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի «ժ» կետ
12.	Արդյո՞ք կազմակերպիչը տնօրենի բացակայության դեպքում ապահովել է տնօրենին փոխարինող՝ ղեկավար պաշտոն զբաղեցնող լիազոր անձի ներկայությունը խաղասրահում:				2	Տեսողական, Փաստաթղթային		«Շահումով խաղերի, ինտերնետ շահումով խաղերի և խաղատների մասին» օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի «ժբ» կետ
13.	Արդյո՞ք կազմակերպիչը չի իրականացնել շահումով խաղի կամ խաղատան կամ խաղասրահի կամ դրանց կազմակերպիչների գովազդը, այդ թվում՝ հեռուստատեսությամբ կամ ռադիոյով կամ համացանցով, բացառությամբ իր պաշտոնական կայքի				3	Տեսողական		«Շահումով խաղերի, ինտերնետ շահումով խաղերի և խաղատների մասին» օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի «ժգ» կետ

	կամ խաղատների կամ շահումով խաղերի շենքերի, շինությունների կամ սրահների մեջ կամ վրա, Հայաստանի Հանրապետության սահմանային մուտքի կետերում, ինչպես նաև առնվազն չորսաստղանի կարգին համապատասխան որակավորման պահանջներին և չափանիշներին համապատասխան հյուրանոցներում տեղադրվողների:							
14.	Արդյո՞ք կազմակերպիչը լիազոր մարմնի կողմից ուղարկված դատարանի օրինական ուժի մեջ մտած վճիռն ստանալուց հետո արգելել է մոլեխաղերով հրապուրվելու հետևանքով իր ընտանիքը նյութական ծանր դրության մեջ դնելու հիմքով սահմանափակ գործունակ ճանաչված անձի մուտքը խաղասրահներ:				2	Տեսողական, Փաստաթղթային		«Շահումով խաղերի, ինտերնետ շահումով խաղերի և խաղատների մասին» օրենքի 6.1-րդ հոդվածի 2-րդ մաս
15.	Արդյո՞ք կազմակերպիչն առանց վերահսկող մարմնին տեղեկացնելու չի փոփոխել լիցենզավորման կարգով սահմանված լիցենզիա ստանալու համար ներկայացված տվյալներից մեկը՝ բացառությամբ իր կողմից հաստատված և լիազոր մարմնի հետ համաձայնեցված կանոնակարգի:				4	Տեսողական, Փաստաթղթային		«Շահումով խաղերի, ինտերնետ շահումով խաղերի և խաղատների մասին» օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասի «ը» կետ
16.	Արդյո՞ք կազմակերպչի կողմից վերահսկող մարմին ներկայացված տեղեկություններում (հաշվետվություններում) բացակայել են կեղծ տվյալները:				4	Տեսողական		«Շահումով խաղերի, ինտերնետ շահումով խաղերի և խաղատների մասին» օրենքի 15-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետ
17.	Կոտայքի մարզի Ծաղկաձորի համայնքի վարչական սահմաններում, Վայոց ձորի մարզի Ջերմուկի համայնքի վարչական սահմաններում, Գեղարքունիքի մարզի Սևանի համայնքի վարչական սահմաններում, Սյունիքի մարզի Մեղրիի համայնքի վարչական սահմաններում շահումով խաղի կամ խաղատան կազմակերպչի կողմից գործունեություն իրականացնելիս արդյո՞ք պահպանված են սույն ստուգաթերթի 17.1-17.5 ենթակետերում նշված պահանջները							ՀՀ կառավարության 2011 թվականի օգոստոսի 18-ի N 1229-Ն որոշում

17.1	Խաղատունը կամ շահումով խաղը կազմակերպված է միայն շինությունում (զբաղեցված է շինությունն ամբողջությամբ կամ այդ շինության առանձնացված մեկ միասնական մասը)				2	Տեսողական, Փաստաթղթային		ՀՀ կառավարության 2011 թվականի օգոստոսի 18-ի N 1229-Ն որոշման հավելվածի 2-րդ
17.2	Խաղատունը կամ շահումով խաղը կազմակերպված է միայն այն շինությունում, որն ուղիղ գծով առնվազն 100 մետր, իսկ Վայոց ձորի մարզի Ջերմուկի, Սյունիքի մարզի Մեղրիի համայնքներում՝ 50 մետր հեռու է որևէ կրթական և պատմամշակութային օջախներից, պետական և տեղական ինքնակառավարման մարմինների վարչական շենքերից, հիվանդանոցների տարածքներից				2	Տեսողական, Փաստաթղթային		ՀՀ կառավարության 2011 թվականի օգոստոսի 18-ի N 1229-Ն որոշման հավելվածի 3-րդ կետի 1-ին ենթակետ
17.3	Ունի առնվազն խաղատան համար՝ 250 քառ. մետր, շահումով խաղի համար՝ 100 քառ. մետր ընդհանուր մակերես, իսկ Սյունիքի մարզի Մեղրիի համայնքում՝ խաղատան համար՝ 200 քառ. մետր, շահումով խաղի համար՝ 80 քառ. մետր ընդհանուր մակերես, և այդ տարածքի առնվազն 50 տոկոսը և առավելագույնը 70 տոկոսն զբաղեցնում է խաղասրահը, իսկ մնացած տարածքում ապահովված են առնվազն նախասրահի, դրամարկղի, սանհանգույցի առկայությունը				2	Տեսողական, Փաստաթղթային		ՀՀ կառավարության 2011 թվականի օգոստոսի 18-ի N 1229-Ն որոշման հավելվածի 3-րդ կետի 2-րդ ենթակետ
17.4	Նախասրահը գտնվում է շինության հիմնական մուտքին հարակից առանձնացված սրահում, որտեղ պետք է իրականացվեն հաճախորդների նույնականացումը և նրանց մասին տվյալների մուտքագրումը տվյալների շտեմարան՝ բացառելով քսանմեկ տարին չլրացած ֆիզիկական անձանց մուտքը խաղասրահ				2	Տեսողական, Փաստաթղթային		ՀՀ կառավարության 2011 թվականի օգոստոսի 18-ի N 1229-Ն որոշման հավելվածի 3-րդ կետի 3-րդ ենթակետ
17.5	Խաղատունը կազմակերպված է առնվազն 4 աստղանի կարգին համապատասխան հյուրանոցներում և մոթելներում:				2	Տեսողական, Փաստաթղթային		ՀՀ կառավարության 2011 թվականի օգոստոսի 18-ի N 1229-Ն որոշման հավելվածի 4-րդ կետ
18.	Արդյո՞ք կազմակերպիչը, լիցենզիայի վերաձևակերպման համար հիմք հանդիսացող փոփոխություն կատարելիս				2	Փաստաթղթային		«Լիցենզավորման մասին» օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մաս

	իրավական ուժ ստանալուց հետո 15-օրյա ժամկետում տեղեկացրել է լիազոր մարմնին:							
19.	Արդյո՞ք կազմակերպիչը լիցենզիա ստանալու համար ներկայացված փաստաթղթերում չի ներկայացրել լիցենզիան տալու համար էական նշանակություն ունեցող կեղծ կամ խեղաթյուրված տեղեկատվություն:				2	Տեսողական, Փաստաթղթային		«Լիցենզավորման մասին» օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետ
20.	Արդյո՞ք կազմակերպչի կողմից բացահայտվել և գնահատվել են փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման հնարավոր և առկա ռիսկերը և գործում են բացահայտված ռիսկերի արդյունավետ կառավարման, զսպման վերահսկման ընթացակարգերը:				2	Փաստաթղթային		«Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» օրենքի 4-րդ հոդված
21.	Արդյո՞ք կազմակերպչի կողմից փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման հնարավոր և առկա ռիսկերի գնահատման արդյունքները պահպանվում են առնվազն 5 տարի ժամկետով:				2	Փաստաթղթային		«Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետ
22.	Արդյո՞ք կազմակերպիչը կասկածելի գործարքի կամ գործարար հարաբերության վերաբերյալ հաշվետվություն է ներկայացրել լիազոր մարմին:				2	Փաստաթղթային		«Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մաս
23.	Արդյո՞ք կազմակերպչի կողմից կասկածելի գործարքի կամ գործարար հարաբերությունների վերաբերյալ տեղեկությունները պահպանվում են առնվազն 5 տարի ժամկետով:				2	Փաստաթղթային		«Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետ
24.	Արդյո՞ք կազմակերպիչը կատարել է կանխիկ գործարք կամ 24 ժամվա ընթացքում կանխիկ գործարքներ, որի (որոնց) հանրագումարը գերազանցում է 5 միլիոն դրամը և դրա մասին լիազոր մարմնին տրամադրել է հաշվետվություն:				2	Փաստաթղթային		«Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետ, ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի

								2014 թ. հոկտեմբերի 7-ի N 271-Ն որոշում
25.	Արդյո՞ք կազմակերպիչը կատարել է անկանխիկ գործարք կամ 24 ժամվա ընթացքում անկանխիկ գործարքներ, որի (որոնց) գումարը կամ հանրագումարը գերազանցում է 20 միլիոն դրամը և դրանց մասին լիազոր մարմնին տրամադրել է հաշվետվություն:				2	Փաստաթղթային		«Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետ, ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի 2014 թ. հոկտեմբերի 7-ի N 271-Ն որոշում
26.	Արդյո՞ք կազմակերպչի աշխատակիցների և ներկայացուցիչների կողմից ապահովված են հաշվետվությունների կամ այլ տեղեկությունների տրամադրման փաստի մասին գաղտնիությունը:				2	Փաստաթղթային		«Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» օրենքի 6-րդ հոդվածի 5-րդ մաս
27.	Արդյո՞ք կազմակերպչի կողմից կասկածելիության չափանիշների, տիպաբանությունների առկայության դեպքում իրականացված վերլուծության արդյունքում գործարքը կամ գործարար հարաբերությունը կասկածելի չորակելու դեպքում դրա հիմնավորումները, կատարված եզրահանգումները, վերլուծության ընթացքը և արդյունքները փաստաթղթավորվում և պահպանվում են առնվազն 5 տարի ժամկետով:				2	Փաստաթղթային		«Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» օրենքի 7-րդ հոդվածի 3-րդ մաս
28.	Արդյո՞ք կազմակերպիչը լիցենզիան ստանալուց հետո հաջորդող 1-ամսյա ժամկետում հաշվառվել է լիազոր մարմնում:				2	Փաստաթղթային		«Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» օրենքի 9-րդ հոդվածի 5-րդ մաս
29.	Արդյո՞ք կազմակերպիչը 1 միլիոն դրամը գերազանցող գործարք (փոխկապակցված մեկանգամյա գործարքներ) իրականացնելու դեպքում իրականացրել է հաճախորդի պատշաճ ուսումնասիրություն, իսկ լիազորված անձի կամ իրական շահառուի առկայության դեպքում նույնականացրել և ստուգել է վերջիններիս ինքնությունը:				2	Փաստաթղթային		«Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ մաս

30.	Արդյո՞ք կազմակերպիչը գործարար հարաբերության ողջ ընթացքում իրականացնում է ընթացիկ պատշաճ ուսումնասիրություն:				2	Փաստաթղթային		«Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» օրենքի 17-րդ հոդվածի 1-ին մաս
31.	Արդյո՞ք կազմակերպիչն առնվազն տարին մեկ անգամ թարմացրել է հաճախորդի նույնականացման և ինքնության ստուգման արդյունքում ձեռքբերված տվյալները:				2	Փաստաթղթային		«Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» օրենքի 17-րդ հոդվածի 2-րդ մաս
32.	Արդյո՞ք կազմակերպիչը կատարում է առանց առերես շփման գործարքներ կամ հաստատում է առանց առերես շփման գործարար հարաբերություններ, եթե այո, ապա արդյո՞ք ներդրված են դրանցով պայմանավորված հնարավոր և առկա ռիսկերի հակազդման (կառավարման) համապատասխան ընթացակարգերը:				2	Փաստաթղթային		«Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» օրենքի 18-րդ հոդված 3-րդ մաս
33.	Արդյո՞ք կազմակերպիչը պահպանում է հաճախորդի պատշաճ ուսումնասիրության ընթացքում ձեռք բերված տեղեկությունները (ներառյալ՝ փաստաթղթերը) գործարար հարաբերության դադարեցումից հետո առնվազն 5 տարի ժամկետով:				2	Փաստաթղթային		«Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մաս
34.	Արդյո՞ք 10-ից ավելի աշխատակից ունեցող կազմակերպիչն ունի ՓԼ/ԱՖ կանխարգելման ներքին իրավական ակտ:				2			«Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մաս
35.	Արդյո՞ք ՓԼ/ԱՖ կանխարգելման ներքին իրավական ակտն առնվազն ներառում է հաճախորդի պատշաճ, այդ թվում՝ հավելյալ և պարզեցված ուսումնասիրության, ներքին դիտարկումների մարմնի գործունեության, գործարքը կամ գործարար հարաբերությունը կասկածելի որակելու, լիազոր մարմնին հաշվետվություն տրամադրելու գործարքների և գործարար հարաբերությունների իրականացման մերժման կամ				2	Փաստաթղթային		«Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մաս

	դադարեցման, ահաբեկչության և զանգվածային ոչնչացման զենքի տարածման հետ կապված անձանց գույքի սառեցման, ներքին դիտարկումների մարմնի և հաճախորդների սպասարկող աշխատակիցների միջև համագործակցության ընթացակարգերը,ներքին դիտարկումների մարմնի և այլ աշխատակիցների աշխատանքի ընդունման, ուսուցման և վերապատրաստման պահանջները, ներքին աուդիտի իրականացման կարգն ու պայմանները, ծառայությունների նոր տեսակների մատուցմամբ, նոր կամ զարգացող տեխնոլոգիաների կիրառմամբ, ինչպես նաև առանց առերես շփման գործարքներով կամ գործարար հարաբերություններով պայմանավորված հնարավոր և առկա ռիսկերի հակազդման (կառավարման) համապատասխան ընթացակարգերը, ռիսկերի արդյունավետ կառավարման ընթացակարգերը՝ բարձր ռիսկի չափանիշների առկայությունը պարզելու համար:							
36.	Արդյո՞ք կազմակերպիչը իրավական ակտերից մեկական օրինակ դրանց հաստատման, ինչպես նաև դրանցում լրացումներ կամ փոփոխություններ կատարելու դեպքում մեկշաբաթյա ժամկետում տրամադրել է լիազոր մարմնին:				2	Փաստաթղթային		«Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» օրենքի 23-րդ հոդվածի 2-րդ մաս
37.	Արդյո՞ք կազմակերպիչն ունի ներքին դիտարկումների մարմին:				2	Փաստաթղթային		«Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» օրենքի 24-րդ հոդվածի 1-ին մաս
38.	Արդյո՞ք կազմակերպչի ներքին դիտարկումների մարմնին ուղղակիորեն և անմիջապես հասանելի են կազմակերպչի կողմից ձեռք բերվող ու պահպանվող տեղեկությունները (ներառյալ՝ փաստաթղթերը):				2	Փաստաթղթային		«Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» օրենքի 24-րդ հոդվածի 4-րդ մաս
39.	Արդյո՞ք կազմակերպչի ներքին դիտարկումների մարմինն առնվազն յուրաքանչյուր կիսամյակը մեկ անգամ ուսումնասիրում է կազմակերպչի, վերջինիս				2	Փաստաթղթային		«Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին»

	ստորաբաժանումների և աշխատողների գործունեությունը՝ օրենսդրական, ենթաօրենսդրական և ներքին իրավական ակտերի պահանջներին համապատասխանության տեսանկյունից և դրա արդյունքների, ինչպես նաև լիազոր մարմնի կողմից առաջադրված այլ հարցերի վերաբերյալ հաշվետվություն է ներկայացրել կազմակերպչի իրավասու մարմնին:							օրենքի 24-րդ հոդվածի 5-րդ մաս
40.	Արդյո՞ք ներքին դիտարկումների մարմինը օրենքով և դրա հիման վրա ընդունված իրավական ակտերով սահմանված գործառույթներն իրականացնելիս անկախ է և ունի կազմակերպչի ավագ ղեկավարության կարգավիճակ:				2	Փաստաթղթային		«Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» օրենքի 24-րդ հոդվածի 6-րդ մաս
41.	Արդյո՞ք 10-ից ավելի աշխատակից ունեցող կազմակերպիչը լիազոր մարմնի սահմանած դեպքերում և հաճախականությամբ իրականացրել է ներքին աուդիտ՝ օրենքով նախատեսված պարտականությունների և գործառույթների պատշաճ իրականացումը վերստուգելու համար:				2	Փաստաթղթային		«Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» օրենքի 25-րդ հոդվածի 1-ին մաս
42.	Արդյո՞ք 10-ից ավելի աշխատակից ունեցող կազմակերպիչը լիազոր մարմնի սահմանած կարգով, լիազոր մարմնի պահանջով կամ իր նախաձեռնությամբ հրավիրել է արտաքին աուդիտ՝ վերստուգելու փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի օրենսդրության ներդրման և արդյունավետության մակարդակը:				2	Փաստաթղթային		«Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» օրենքի 25-րդ հոդվածի 2-րդ մաս

1.	«Այո»-առկա է, համապատասխանում է նորմատիվ իրավական ակտերի պահանջներին, պահպանված են նորմատիվ իրավական ակտերի պահանջները	V		
2.	«Ոչ»-բացակայում է, չի համապատասխանում, չի բավարարում նորմատիվ իրավական ակտերի պահանջներին, առկա են խախտումներ		V	
3.	«Չ/Պ»-չի պահանջվում			V

Ստուգաթերթը կազմվել է հետևյալ նորմատիվ իրավական ակտերի հիման վրա՝

1. «Շահումով խաղերի, ինտերնետ շահումով խաղերի և խաղատների մասին» ՀՀ օրենք,
2. «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» ՀՀ օրենք,
3. «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենք,
4. ՀՀ կառավարության 2011 թվականի օգոստոսի 18-ի N1229-Ն որոշում,
5. ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի 07.10.2014 թ. N271-Ն որոշում:»:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ Ծ. ՍՈՂՈՄՈՆՅԱՆ

17.06.2021
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ